«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում /ՁԽՈՒ երեխաների հաղորդակցման զարգացման առանձնահատկությունները /

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Ազատյան

Ուսումնական հաստատություն՝ Աշտարակի Ն.Աշտարկեցու անվան հմ 1 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....5

1.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ---5

1.2 ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....7

ԳԼՈՒԽ 2. ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ----------11

2.1 ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ- Յուրաքանչյուր մարդ անընդհատ գտնվում է որոշակի փոխհարաբերությունների մեջ շրջապատի հետ, և այդ հաղորդակցման շնորհիվ մարդն սկսում է հասկանալ ինքն իրեն, հասկանալ շրջապատին և իր տեղն ու դերը տվյալ սոցիումում: Մեր ժամանակաշրջանում քաղաքակիրթ երկրներում միջանձնային հարաբերությունները զարգացման մի նոր փուլ են մտնում , որտեղ կարևորվում է հավասարության սկզբունքը և մարդու իրավունքը: Սակայն հաճախ մարդիկ խախտում են իրենց իսկ կողմից որդեգրված սկզբունքները և անուշադրության կամ անհանդուրժողական վերաբերմունքի արժանացնում մարդակային որոշակի խմբերի , որոնք իրենց զարգացման մեջ որոշ չափով տարբերվում են մեզանից: Եվ չգտնելով նրանց հետ հաղորդակցման տարբերակ մենք մեկուսացնում ենք նրանց, առանձնացնելով որպես հասարակության ոչ լիարժեք անդամների: Հատուկ կրթական համակարգի ներկայիս զարգացման փուլում գիտակցվում է հաղորդակցման ունակությունների նպատակաուղղված զարգացման անհրաժեշտությունը, արդյունավետ փոխհամագործակցության պայմանների ստեղծումը որպես կարևոր գործոն ՝ զարգացման խանգարում ունեցող դպրոցական տարիքի երեխաների խանգարումների հաջող շտկման համար: Վերջին տասնամյակների ընթացքում կատարած հետազոտությունները վկայում են , որ զարգացման խանգարում ունեցող երեխաներից շատերը հատկապես բարդ կամ զուգակցված զարգացման խանգարումներ ունեցող երեխաները ունենում են հաղորդակցման խնդիրներ և այս հարցը արժանացել է տարբեր ոլորտների մասնագետների մեծ ուշադրությանը: Այս խնդրի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է ինչպես մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների կլինիկական ուսումնասիրության որոշակի ձեռքբերումներով, այնպես էլ հոգեբանական և մանկավարժական ուղղությունների գործնական խնդիրների ոչ լիարժեք գիտելիքներով:

Հետազոտությունները ցույց են տալիս , որ հաղորդակցման խանգարում ունեցող երեխաների հետ խնդրի հաղթահարման նպատակով հիմնական աշխատանքները տարվում են արտադպրոցական պայմաններում՝ նեղ մասնագետների կողմից, և դպրոցի մանկավարժները չեն տիրապետում համապատասխան մեթոդների և միջոցների: Գրականության վերլուծությունը ցույց է տալիս , որ դպրոց հաճախող զարգացման

խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման ունակությունների ձևավորմանն ուղղված աշխատանքները հանրակրթական դպրոցներում բավականաչափ ուսումնասիրված չեն, որն էլ որոշակի է դարձնում հետազոտության արդիականությունը՝ փաստելով խնդրի կարևորությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ- Ընտրել և համակարգել մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները և միջոցները, որոնք կիրառելի են հանրակրթական դպրոցներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

1. Ուսումնասիրել ընդհանուր և հատուկգիտամեթոդական գրականությունում հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված մոտեցումները,
2. ընտրել և համակարգել հաղորդակցման հմտությունների զարգացման վերաբերյալ հատուկ մեթոդներ, միջոցներ, որոնք մանկավարժներին հնարավորություն կտան զարգացնել զարգացման խանգարում ունեցող երեխաների հաղորդակցման ունակությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Փոխհատուցման տեսություն Լ. Ս. Վիգոտսկի՝ 2003թ

Առաջատար գործունեության տեսություն՝ Դ.Բ. Էլկոնին՝ 2007թ

Ինտելեկտի փուլային զարգացման տեսություն Պ.Յա Գալպերին՝ 1985թ

Հաղորդակցման մատրիցա ՝ Պերկինս կույրերի դպրոց. Չ Ռոուլենդ 2010թ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝

- մասնագիտական, գիտամեթոդական գրականության վերլուծություն:
- դիտում , զրույց
- հարցում,
- խաղ,
- այլընտրանքային հաղորդակցման մեթոդներ

ԳԼՈՒԽ 1. ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Մտավոր զարգացան խանգարումը գլխուղեղի օրգանական ախտահարման հետևանքով առաջացած բարձրագույն իմացական գործընթացների կայուն խանգարում է: Այս երեխաներին բնորոշ է հաղորդակցման պահանջմունքների և կարողությունների ցածր մակարդակ, մտածողության, հիշողության և հուզակամային ոլորտի խանգարումները: Դ.Ն. Իսաևան առանձնացրել է հոգեկան զարգացման խանգարման չորս հիմնական ձև՝ ասթենիկական, ատոնիկական, սթեիկական և դիսֆորիական:

Մտավոր զարգացման խանգարումներն արտահայտվում են հոգեկան զարգացման հապաղմամբ կամ թերզարգացմամբ, դրանք ուղեկցվում են ճանաչողական , հուզակամային, խոսքի և շարժողական ոլորտների խանգարմամբ:Առանձնացվում է մտավոր զարգացման խանգարման չորս աստիճան ՝ թեթև, չափավոր, ծանր, խորը:

Հաղորդակցումը կարևոր դեր ունի երեխաների հոգեֆիզիկական զարգացման գործընթացում և հաղորդակցման փորձը երեխաները ձեռք ենք բերում մեծահասակների հետ փոխհարաբերությունների կառուցման հիման վրա:Հատկապես մեծ է հաղորդակցման դերը մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների զարգացման համար:

Վերջին տասնամյակներում մեծացել է հետաքրքրությունը դեպի այս երեխաների խնդիրները, մասնագետների կողմից ուսումնասիրվում և բացահայտվում են նրանց խանգարումների պատճառները և մշակվում տարբեր մեթոդներ ու միջոցներ ուղղված այդ խանգարումների շտկմանը և սա դինամիկ գործընթաց է: Տվյալների հետազոտությունը ցույց է տալիս որ, կտրուկ աճել է զարգացման խանգարումներով երեխաների ծնելիությունը, պայմանավորված գենետիկ կամ միջավայրային գործոնների ազդեցությամբ: Հետևաբար առաջ է գալիս մեծ խնդիր խորապես ուսումնասիրել և մշակել խանգարումների շտկմանը ուղղված միջոցներ՝ հիմնվելով նախորդների փորձի վրա: Եվ որքան շուտ կկազմակերպի տվյալ միջոցառումները, ապահովելով վաղ միջամտություն, այնքան արդյունավետ կլինի տարված աշխատանքները: Գրեթե բոլոր հետազոտողները շեշտում են, որ դիզոնտոգենեզի տվյալ տեսակն ունեցող երեխաների բարեհաջող զարգացման , ադապտացման և

սոցիալականացման խաթարման գլխավոր բաղադիրչը՝ հոգեկան գործընթացների անհասունությունն է : Նրանց մոտ զարգացած չեն հաղորդակցման ունակությունները, որը դրսևորվում է բանավոր խոսքի թերզարգացմամբ, երբեմն նաև որոշակի ձևավորված խոսքի դեպքում երկխոսություն կազմելու անկարողությամբ :Վաղ միջամտության դեպքում, երբ կազմակերպվում է արդյունավետ միջամտություն հաջողվում է ցանկացած խանգարման դեպքում որոշակի հաղորդակցման ունակություններ ձևավորել: Վաղ միջամտությունը ենթադրում է խանգարման վաղ հայտնաբերում, գնահատում, շտկողական աշխատանքների կազմակերպում :

Շատ մասնագետներ երեխայի զարգացման ընթացքում կարևորում են խաղային գործունեության դերը և նշում խաղի դերի նշանակությունը երեխայի հետ շտկողական աշխատանքների կազմակերպման պրոցեսում: Վ.Ս. Մուխինան նշում է, որ նախադպրոցական տարիքում խաղը դառնում է առաջատար գործունեություն, բայց ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասն անցկացնում է զվարճացնող խաղերում, այլ խաղը առաջացնում է որակական փոփոխություններ երեխայի հոգեբանությունում[1] :

Ըստ Վ.Գ. Պետրովայի և Լ.Վ. Զանկովի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաները դժվարություններ են ունենում ոչ միայն ինֆորմացիայի ձեռքբերման և կուտակման այլև դրանց վերարտադրման հարցում, քանի որ վերարտադրումը բարդ պրոցես է, որը պահանջում է բարձր ակտիվություն և նպատակաուղղվածություն:[2]

Առանձնահատուկ տեղ է գրավում երեխային հասարակական փորձին ծանոթացնելու գործում ՝ խոսքը: Այն իր մեջ ներառում է առարկայի կամ գործողության խոսքային նկարագրություն, լսելով խոսքային հրահանգը երեխան պետք է մտովի պատկերացնի այդ ամենը և ընտրի անհրաժեշտ էլեմենտները առաջադրանքը կատարելու համար , ընդ որում խոսքային հրահանգի դեպքում տեսողական հուշումը բացակայում է: Խոսքի ձևավորումը և զարգացումը մեծ աշխատանք է պահանջում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատանքներում: Իմաստային խոսքի զարգացումը մեծապես փոխկապակցված է երեխայի հոգեֆիզիկական զարգացման հետ: Առարկայական գերծունեության զարգացումը և դրանց ընկալումը բերում է նրան , որ երեխան սկսում է կարևորել շրջապատող առարկաները և ըստ այդմ էլ սկսում է սովորել դրանք բնորոշող բառեր և դրանց հետ իրականացվող գործողությունները բնորոշող բառերը:Այդպես երեխան ընդլայնում է իր բառապաշարը գոյականներով, դրանց հետ կապվող գործողությունները բնորոշող բայերով,

դրանց հատկանիշները ցույց տվող ածականներով:Կոլեկտիվ գործունեության մեջ երեխան սկսում է փոխհամագործակցել ինչպես մեծահասակների այնպես էլ հասակակիցների հետ , ձևավորվում է հաղորդակցման պահանջմունք և որքան բարձր է երեխայի հոգեֆիզիկական զարգացման մակարդակը այնքան մեծ դեր է խաղում հաղորդակցման մեջ խոսքը:

1.2 ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ինքնին հաղորդակցումը լայն հասկացողություն է , այն լինում է խոսքային և ոչ խոսքային միջոցներով՝ ժեստեր, միմիկա, լաց, ծիծաղ, մարմնի դիրք : Հաղորդակցման պակասը երեխայի զարգացման վաղ շրջանում բացասաբար է անրադառնում նրա ընդհանուր զարգացման վրա: Ոչ վերբալ հաղորդկցումը հազարամյակների պատմություն ունի, այն եղել է նախամարդու հաղորդակցման միջոցը: Հետազոտողների կողմից հայտնաբերված հնագույն քարանձավների նկարներում հին մարդիկ կարողացել են մարմնի շարժումների , դեմքերի արտահայտությունների միջոցով փոխանցել իրենց զգացմունքները:Սա նշանակում է ,որ ոչ խոսքային հաղորդակցումը վաղուց կիառելի է եղել մարդկանց կողմից և ավելի վաղ քան հաղորդակցման խոսքային ձևը : Վ.Ա. Լաբունսկայան նշում է, որ ոչ վերբալ հաղորդակցումը ներառում է տեսողական ազդանշանների օգտագործում, ինչպիսիք են մարմնի լեզուն, հեռավորությունը և ֆիզիկական միջավայրը, տեսքը: Այնպես ինչպես բանավոր խոսքն է պարունակում ոչ խոսքային տարրեր, օրինակ՝ ձայնի որակ, արագություն, բարձրություն, խոսելու ոճ, ռիթմ, ինտոնացիա[4] :

Այս ոլորտի մասնագետները ոչ վերբալ երեխաների հաղորդակցման ունակությունները զարգացնելու համար առաջարկում են այլընտրանքային հաղորդակցման տարբերակները:

Հաղորդակցման տեսկաները Ե.Ա.Զառեչնովան ներկայացնում է բուրգի տեսքով (նկար 1)որի ներքևի մասը ներկացայնում է ոչ խոսքային հաղորդակցման ձևերը , իսկ գագաթային մասը վերբալ ձևերը: Բուրգի հիմքում ընկած է կոնտակտը և համատեղ գործունեությունը ,որը շատ մասնագետների կողմից առաջադրվել է որպես առաջնային խնդիր[3]:



Նկար 1. Հաղորդակցման միջոցների հաջորդական անցում , որը ներկայացված է բուրգի տեսքով:

Սիմվոլների միջոցով հաղորդակցումը կարող է կատարվել նկարների փոխանակման, մատով նկարը ցույց տալու, համապատասխան սիմվոլի սեղմակի վրա մատով հպվելու միջոցով:

Տ.Ա.Սպիրիդոնովան կարևորում է, որ մասնագետը ունակ լինի հասկանալու հանդիսանում է արդյոք երեխայի վարագիծը հաղորդակցման փորձ: Անհրաժեշտ է և դրական, և բացասական վարքագիծը դիտարկել հաղորդակցման փորձի տեսնկյունից, փորձել հասկանալ ինչու է երեխան տվյալ իրավիճակում ցուցաբերում տվյալ վարքագիծը: Վերադառնալով հաղորդակցման բուրգին պետք է նշենք, որ հաղորդակցման առաջին փուլում բազմակի արատով երեխաների հետ աշխատանքը պետք է սկսել համատեղ կատարվող գործողություններից՝ ձեռքը ձեռքի մեջ սկզբունքվ:

Ս.Դ. Զաբրամնայան և մի շարք այլ մասնագետներ փաստում են իրենց մասնագիտական փորձում ոչ խոսքային հորդակցման ձևավորման ժամանակ օրացույցային համակարգի կիրառելիության արդյունավետությունը: Սրանց կառուցվածքը հստակ չէ ինչը լայն հնարավորություն է տալիս ձևափոխել այն, կիրառել հաղորդակցման քարտեր կամ սիմվոլներ, հարմարեցնելով երեխայի առանձնահատկություններին:[5]Սա հանդիսանում է կապող օղակ ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման միջոցների միջև : Ռ.Բլախան նշում է ,որ օրացույցերը լինում են տարբեր, կախված երեխաների առանձնահատկություններից և զարգացման խնդիրներից: Կարելի է կիրառել փոքրիկ արկղիկների տեսքով օրացույցներ , որոնք սոսնձված են իրար և ամեն մի արկղիկ իրենից ներկայացնում է որոշակի գործողություն, և ժամանակահատված:Երեխան արկղիկների օգնությամբ սկսում է պատկերացում ունենալ գործողությունների հերթականության և տևողության մասին: Նա հասկանում է, որ ցանկացած գործողություն ունի հետևյալ կառուցվածքը՝ սկիզբ , ընթացք և ավարտ, որը նշանավորվում է ավարտական տուփի մեջ տվյալ գործողության սիմվոլը տեղադրելով: [6]

Օրացույցային համակարգը մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ուսուցման մեջ կարևոր դեր է կատարում: Օրացույցը հաղորդակցման սիմվոլիկ համակարգ է , որում պատկեր-սիմվոլները և առարկայական սիմվոլները կիրառվում են որոշակի ժամանակի կտրվածքում գործունեությունը բնորոշելու համար: Օրացույցային համակարգի շնորհիվ երեխան ընդգրկվում է առօրյա իրադարձությունների և գործողությունների հաջորդականության մեջ, ինչը հիմք է հանդիսանում հաղորդակցման ունակությունների զարգացման համար: Օրացույցային համակարգը մշակվել է Հոլանդիայում: Հեղինակներն են Յան Վան Դայկը, Մ. Ջանսենը, Տ. Վիսսերը:Առանձնացնում են օրացույցերի հետևյալ տիպերը՝

- Առարկայական օրացույց, որի համար սիմվոլներ են ծառայում իրական առարկաները, առարկաների բառելեֆ, ռելեֆային, և եզրագծային պատկերները:
- Պատկերային օրացույցեր, որի սիմվոլները առարկաների ,գործողությունների կամ գործողության վայրի պատկերներ են :
- Խառը տիպի օրացույցներ, որտեղ պատկերը լրացվում է խոսքով: [8]

Լ. Սարատիկյանը և Մ . Հարությունյանը իրենց <<Հոգեֆիզիկական զարգացման խանգարում ունեցող երեխաների հոգեբանական աջակցություն>> գրքում նշում են , որ հաղորդակցման օրացույցերն ունեն հետևյալ նպատակները՝[7]

- Ձևավորել նպատակային վարք՝ ստեղծելով բարձր մակարդակի արձագանքող միջավայր
- Արձագանքել պոտենցիալ հաղորդակցման ձևերին, որպեսզի երեխան սովորի դրանց կիրառման նպատակները
- Ոչ պայմանական շարժանքների հիման վրա ձևավորել պայմանական շարժանքներ, կամ անցնել սիմվոլների կիրառմանը
- Սովորեցնել սիմվոլ-բառի իմաստը՝ ճիշտ, սովորեցնել և կոնկրետ և վերացական սիմվոլներ
- Սովորեցնել սիմվոլային համադրություններ
- Ընդլայնել բառիմաստային ընկալման և գործածման հաղորդակցակն կարողությունները:

Այլընտրանքային հաղորդակցումը ունի իր ձևերը՝

- Հաղորդակցում օժանդակող միջոցների օգնությամբ,(կոմունիկատիվ տախտակներ, ալբոմներ, էլեկտրոնային միջոցներ, որոնք երեխայի փոխարեն ցույց են տալիս սիմվոլը)
- Հաղորդակցում առանց օժանդակող միջոցների(ժեստեր, մատնախոսություն, աչքերի թարթումը որպես պատասխան)

Այլընտրանքային հաղորդակցման միջոցների նպատակն է հեշտացնել խոսք չունեցող անձի առօրյան, թույլ տալ որ անձը կարողանա հաղորդակցին հասցնի իր ցանկություններն, և մեծապես նպաստի անձի լիաժեքության զգացումի զարգացմանը: Այլընտրանքային հաղորդակցման տեսակների ընտրության ժամանակ հաշվի են առնում երեխայի ճանաչողական , սենսո-մոտոր, հոգեֆիզիկական, զարգացման մակարդակը,և զարգացման խանգարման տեսակն ու խորությունը :

ԳԼՈՒԽ 2. ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.

2.1 ԶԽՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Մեր հետազոտության հիմնախնդրի լուծման համար ուսումնասիրել ենք մտավոր զարգացման խանգարում ունեցող դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորման տեսական հիմունքները, տվել դրանց հոգեբանական և մանկավարժական վերլուծությունը: Մանրամասն ուսումնասիրվել են հիմնախնդրի շուրջ եղած ուսումնամեթոդական ձեռնարկները, դպրոցական կրթության համալիր ծրագրերը, հոդվածները: Մեր հետազոտության համար մանկավարժական դիտարկման նպատակն է եղել ուսումնասիրել դպրոցական տարիքի երեխաների հաղորդակցման ունակությունների զարգացման առանձնահատկությունները, գնահատել հաղորդակցման ունակությունների դրսևորման աստիճանը:

Ուսումնասիրվել է մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների բժշկական քարտերը, ԱՈՒՊ-ները: Հետազոտության ընթացքում անցկացվել են դիտումներ, հարցազրույց: Տվյալների հավաքագրման համար կրառվել է հարցաթերթիկային մեթոդ: Կազմած հարցաթերթը ներառել է 10 հարց:(Հավելված 1)

Դասասենյակի համար մենք պատրաստել ենք առարկայական սիմվոլներ, երեխաներին ծանոթ առարկաներից , որոնք կիրառվել են ամեն օր: 10 x 15սմ չափի սպիտակ ստվարաթղթերով պատրաստել ենք սիմվոլների հիմքը, որի վրա փակցվել են առարկաները (տես հավելված 2): Պատկեր սիմվոլները պատրաստել ենք նույն առարաների 10 x 6 սմ չափի ֆոտոնկարներից, որոնք լամինացվել են , որպեսզի դիմացկուն լինեն, և որոնց հետնամասում փակցվել է կպչուն ժապավեն :Պատկեր սիմվոլների համար կարվել է խավատախտակ, իսկ տեսողական խնդրով երեխաների համար տուփերից պատրաստվել է օրացույցային համակարգ առարկայական սիմվոլների համար: (Հավելված 3)

Առաջին փուլում փորձել ենք ձևավորել յուրաքանչյուր երեխայի հետ կոնտակտ, հասկանալով երեխայի ագրեսիվ վաքագծի պատճառը, և տվյալ պահին համապատասխան

միջոցներ ձեռք առնելով հաջողվել է հաստատել էմոցիոնալ կոնտակտ: Աշխատանքները կազմակերպվել են հաջորդականության և մատչելիության սկզբունների հիման վրա:

Երկրորդ փուլում զարգացրել ենք երեխաների նույնականացման կարողությունը, երեխաները ընկալել են առարկաների կապը պատկեր-սիմվոլների հետ: Խաղ-պարապմունքների ժամանակ, երեխային ցույց ենք տվել նրա նախընտրած առարկան, միաժամանակ կողքը դնելով տվյալ առարկայի պատկեր սիմվոլը: Ձեռք-ձեռքի համատեղ գործողության միջոցով վերցրել ենք երեխայի հետ պատկեր-սիմվոլը և կատարել փոխանակում տվյալ առարկայի հետ:

Աշխատանքի հաջորդ փուլի ժամանակ մենք փորձել ենք հետազոտվող երեխաներին սովորեցնել ընկալել սիմվոլների կապը կատարվող գործողությունների հետ, կարևոր է սովորեցել այն գաղափարը, որ առարկան անմիջական կապ ունի գործողության հետ: Ամենօրյա անխախտ կերպով կրկնվող գործողությունը (վերցնել սիմվոլը , ձեռքում պահած գնալ գործողության կատարվելիք վայր, կատարել գործողությունը, վերադառնալ փակցնել գրատախտակին ապահովեց սիմվոլները որպես ցանկություն արտահայտելու միջոց կիրառելու ունակության զարգացմանը:

Պատկեր-սիմվոլների ցուցադրումը և կիրառումը իրականացվել է 4 ամիս շարունակ, հետզհետե ավելացնելով պատկեր սիմվոլների քանակը: Սրանով երեխայի առօրյան դարձնելով ավելի հագեցած, և նպաստելով այլ ուսուցիչների հետ հաղորդակցվելու ունակության ձևավորմանը, ընդլայնելով երեխաների հաղորդակցման օղակի սահմանները և ներգրավելով երեխային ուսումնական պրոցեսի մեջ: Նաև հաշվի առնելով այն հանգամանքը , որ ներկայիս տախնալոգիաների զարգացման դարում երեխաները որքան են կապված պլանշետների , հեռախոսների հետ, փորձեցինք այն շահավետ կիրառել նաև մեր հետազոտության մեջ: ԶԽՈՒ երեխաների հաղորդակցման զարգացման նպատակով կիրառել ենք հետևյալ հավելվածը, ճիշտ այն ռուսալեզու էր,բայց ուներ մեր ձայնը ձայնագրելու հնարավորություն, որը մեզ հնարավորություն տվեց հավելվածի մեջ քարտերի տակ գրել հայատառ և միաժամանակ ձայնագրել մեր ձայնը, այսինքն անվանել յուրաքանչյուր առարկա հայալեզու: Հավելվածը կոչվում է АУТИЗМ ОБЩЕНИЕ այն նախատեսված է հաղորդակցման ունակություններ չունեցող երեխաների մոտ հաղորդակցում ձևավորելու և ճանաչողական ոլորտը զարգացնելու համար:

Կազմակերպված աշխատանքների սկզբնական փուլում այս երեխաները չէին կարողանում արտահայտել իրենց պահանջմունքները, ցանկությունները ավանդական եղանակներով

(ժեստեր, մատնախոսություն, գրավոր կամ բանավոր խոսք):Նրանցից ոմանց մոտ նկատվում էր դեմքի միմիկաների, մարմնի դիրքի փոփոխություն , անցանկալի գործողության դեպքում լաց, կամ ինքնաագրեսիվ դրսևորումներ, ձայնարկումներ : Սա մեր կողմից ընդունվեց որպես մեծերի ուշադրությունը գրավելու վարքագիծ, չունենալով հաղորդակցման ունակություններ այս երեխաները չեն մոտենա մանկավարժին և հասկացնի ինչ որ բան: Դա է պատճառը, որ նրանք կիրառում են իրենց համար հասանելի վարքագիծը ուշադրության արժանանալու համար:Երբեմն մանկավարժները այս վարքագիծը դիտարկում են այնպիսին, որը պետք է վերացնել, շտկել, ուղղել: Սակայն դիտարկելով ուրիշ անկյան տակ կարելի է հասկանալ, որ դրանք երեխայի իմացած միակ եղանակներն են, որևէ ինֆորմացիա մեզ հասցնելու համար: Մանկավարժը հասկանալով այդ ահազանգը, կատարում է երեխայի ցանկությունը, այսպես սկսվում է մանկավարժի և երեխայի միջև հաղորդակցման պրոցեսը, հաստատվում է սկզբնական կոնտակտը : Մանկավարժը հասկացավ և ճիշտ արձագանքեց երեխայի չգիտակցված նշաններին , իսկ երեխան զգում է որ իրեն հասկացան , վերջ հիմքը դրված է:

ՈՒսուցիչը պետք է միշտ բազմակողմանի մտածի և փորձի հասկանալ այս կամ այն վարքի դրսևորումները, զգա թե ինչ է ուզում մեզ ասել խոսք չունեցող երեխան: Ցանկացած վարքագիծ դրական, թե բացասական պետք է դիտարկել հաղորդակցման փորձի տեսանկյունից: Նույնիսկ լացը կարելի է դիտարկել որպես հաղորդակցման փորձ՝ օրինակ նա լացում է որովհետև սոված է և հաց է պահանջում, կամ ինչոր տեղ է ցավում, կամ ուշադրություն է պահանջում և ուզում է որ իր հետ շփվեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտության ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների և տարված աշխատանքների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

- որ ԶԽՈՒ երեխաները հաղորդակցական հմտությունների զարգացման մեջ հետ են մնում բնականոն զարգացում ունեցող իրենց հասակակիցներից: Հաղորդակցման դժվարությունները սահմանափակում են շրջակա աշխարհի ճանաչման հնարավորությունները, նպաստում են մեծահասակների և հասակակիցների հետ փոխհարաբերություններում խնդիրների առաջացմանը:
- ԶԳՈՒ երեխաների հաղորդակցման ունակությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է շտկողական աշխատանքներում խոսք չունեցող երեխաների հետ հաղորդակցման այլընտրանքային տարբեր միջոցների կիրառումը:
- Կարևոր է, որ մանկավարժն ունակ լինի հասկանալու հանդիսանում է արդյոք երեխայի վարագիծը հաղորդակցման փորձ: Անհրաժեշտ է և դրական, և բացասական վարքագիծը դիտարկել հաղորդակցման փորձի տեսնկյունից, փորձել հասկանալ ինչու է երեխան տվյալ իրավիճակում ցուցաբերում տվյալ վարքագիծը:
- Այլընտրանքային միջոցի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական զարգացումը , ինչպես նաև ապահովել դասարանի բոլոր երեխաների ակտիվ ներգրավվածությունը շտկման գործընթացում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկում ենք, որ ԶԽՈՒ խոսքային հաղորդակցում չունեցող երեխաների հաղորդակցման ունակությունների զարգացման գործում մանկավարժների կողմից կիրառվեն այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, որոնք կօգնեն երեխայի հետ աշխատանքում ձևավորել և զարգացնել հաղորդակցման ունակություններ և հիմք կդնեն երեխային ուսումնական գործընթացի մեջ ներգրավելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Мухина В. С. Психология дошкольников , М,. 1975

2. Петрова В.Г. Психология умственно отсталых школьников: Учебное пособие / В.Г.

3. Е.А. Заречнова,Т.А.Спиридонова,О.А.Дмитрева, Значимость процесса формирования коммуни кации для развития детей со сложной структурой дефекта //Издательство <<Весь Сергиев Посад >> 2003г.-46с.

4. Лабунская В.А. Невербальное поведение : структура и функции. Изд.-во Ростов на дону 1986

5..Забрамная С.Д. Отбор умственно отсталых детей в специальные учереждения: //Просвещение 1988-94с.

6. Блаха Ребека, Календари, пособие по формированию средств общения// Сергиев Посад 2007г .-78с.

7.Լիլիթ Սարատիկյան , Մարիաննա Հարությունյան Հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հոգեբանական աջակցություն// Երևան <<Ասողիկ>> 2017-61էջ

8.Ян Ван Дайк ,

О детях с врожденными нарушениями зрения и слуха. Вопросы обучения и иследование пробл ем//2019-102с.